49 Էն կողմը մէկ քիւրթու էլ[1] մը կէր, ասաց թագաւորուն. «Թագաւոր ապրած կէնայ. տիւ խեծել մի անե, մենք 6000 խոզի ենք. կէրթանք էնտեղ զօզան[2], վրան կզարնենք, էն վանք կթալնենք կբերենք»:

50. Քրթեր գնացին տէսան որ վանքի տուռ չեն բանայ. մէզեցին[3] վեր ուրենց թէ, էրթանք շաբիք մը թաթխենք մէջ արընին, զարնենք մզրըղի ծէր, տնկենք վանքի առան առաջ, ասենք. մենք գնացինք Սասնու գեաւուրն ոպանեցինք, էլ ձեր ումուն մեռաւ. կուզէք տուռ բացէք, կուզէք մի՛ բանաք, չում սև կուպր սիւտկի:

51. Էսա բան որ լսեցին վարդապետներ, ուրենք ուրենց ասին, որ մեր Սասնու քեռաղաք աւրեր են. մեր թագաւորն ոպաներ են, էլ ընչի՞ մենք մնանք վեր աշխարքին: Էլան տուռ բացին մէկ սարկաւագ օրօղկեցին գնաց գետից ջուր բերելու:

52 Քրթեր մտան վանք թալնեցին, վարդապետներ, սարկաւագներ զըմէն ըրրտեցին. մենակ էն սարկաւագ աղաւոլաւ, որ գնաց ջուր բերելու: Սարկաւագն որ տարձաւ տէսաւ վարդապետներ, սարկաւագներ ոպաներ ին, վանք թալներ ին, մէկ խին վարագիւռ մնացեր էր, թաթխեց մէջ արընին տարաւ Սասնու քեռաղաք, տրեց Տաւիթի առջեւ ու եղելութեն պատմեց Տաւիթին:

53. Տաւիթն բարկացաւ վեր սարկաւագին թէ, ինչի՞ տուռ բացիք: Էն էլ պատմեց թէ ինչ խաբելութենով տուռ բանալ տուին: Տաւիթն առեց քանիմ՛ մարդ գնաց վանք սէրսըվեց. նորէն վարդապետ, սարկաւագ տրեց մէջ վանքին չենցուց. ապսպրեց որ առանց ուր հրամանին վանքի տուռ մէկին մը վէրէն չբանան:

54 Տաւիթն էլաւ ուր նեռվանեղ թալեց թեւը, գնաց սար նէճիր անելու: Առջևէն մէկ վէրու զապալ[4] փախաւ. Տաւիթն ընկաւ խուէէն, տէս ու տէն տարաւ լբե չում գնացին խասան մէջ էն քրթիւ էլին. որ Մարութի վանք թալներ ին: Առաց ինանց. «Եա իմ զաղալն տիւրս պիտի խանէք, եա ձեր էլն պլթուն պիտի թրէ ընցուցեմ»: Ինանք զարմացան էտայ պլուլիկ[5] աղն խօսքերաւ վէրէն, ասին. «Զո՛, աղա, տիւ ի՞նչխ պիտի մե սրէ ընցուցես: Կեօ քըոյ զաղալն էլ էս տեղն ի չենք իտայ»:

55 Տաւիթն էր քաշեց թուր ու ասաց.

«Ցիշամ քե խէր կենտանին,
Մարութայ ռուրը Աստուածածին,
Խաչն պատարագին վեր աջն թեւին»:

---

4 Ցեղ, տոհմ: 2 Ամարանոց: 3 Խորհեցին 4 Զաղ: 5 Փոքր: